ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

11 օգոստոսի 2016 թվականի N 80-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N57-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի «Նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N 43-Ա հրամանով հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» N57-Ա հրամանի 1-ին կետում.

1) <<Էթել նեթվորկս>> բառերը փոխարինել <<Էլյթել նեթվորկս>> բառերով,

2) լրացնել՝

| | |
|---|---|
| <<Սիլվա Ադամյան | <<Էկոլոգիական Հասարակական միություն>> հասարակական կազմակերպության նախագահ |
| Գրետա Գաբրիելյան | <<Էկոլոգիական ակադեմիա>> հասարակական կազմակերպության նախագահ>> բառերը: |

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ